Սանահնեցիք մեծ աղմուկ են բարձրացնում և արգելք հանդիսանում այդ ամրոցի կառուցմանը, պատճառաբանելով, որ այդ ամրոցի բռնած տարածությունն իրենցն է և ոչ թե Հաղբատինը։ Գժտությունը այնքան է սաստկանում, որ այդ հարցին ստիպված է լինում միջամտել Զաքարեի որդի Շահնշահը[1]։ Վերջիվերջո այդ ամրոցը կառուցվում է, բայց հետագայում քանդվում է թաթարների հրամանով։ Այժմ տեղում մնացել է ամրոցի մեջ շինած մատուռը, որի ճակատին պահպանված արձանագրության մեջ կարդում ենք, որ Հովհաննես առաջնորդն այդ մատուռն ու ամրոցը շինել է 1233 թվականին իր քեռի Իվանեի, նրա որդի Ավագի, ինչպես նաև Զաքարեի որդի Շահնշահի հրամանով։ Այժմ այդ հնավայրը կոչվում է Կայան բերդ։

Սանահնի վանքում կուլտուրական կյանքը երկար ժամանակով գրեթե դադարում է 13-րդ դարի երեսնական թվականներից, երբ Հայաստան ոտք դրին թուրքական ցեղերը։ Այդ ժամանակաշրջանում, մինչև 15-րդ դարը ոչ մի տեղեկություն չունենք շինարարության, ձեռագրեր արտագրվելու, պատմա-բանասիրական և այլ ուսումնասիրություններ կատարելու մասին։

Այդ շրջանում հիշատակության արժանի որևէ իրադարձություն տեղի չի ունեցել, բացի այն բանից, որ ունևոր խավի բազմաթիվ անձնավորություններ վանքին կալվածքներ և շարժական գույք են նվիրել իրենց «հոգու փրկության» համար և նվերների փոխարեն վանքից ստացել են ամեն տարի կատարվող ժամ կամ պատարագ։ Սանահնի վանքի 1240 թվականից մինչև 1291 թվականներին պատկանող բոլոր թվական ունեցող 26 արձանագրություններից 23-ը նվիրատվական են։ Մնացած երեքից մեկը աղոթքներ են՝ Սաղմոսից քաղված (№ 7), երկրորդը հիշատակագրություն է խաչքարի վրա (№ 176), իսկ երրորդն էլ մի անավարտ արձանագրություն է, որ, ամենայն հավանականությամբ, նվիրատվական բովանդակություն է ունեցել (№ 63)։ Շինարարական բնույթի կամ այլ բովանդակությամբ այնպիսի մի արձանագրություն, որ ցույց տար կյանքի վերելք, բոլորովին չկա։

1 Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վ. Գանձակեցւոյ, էջ 92։